Արձանագրություն N 2

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/04» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

23.05.2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամ՝ Արաբու Մարքարյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝ մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Անվանումը	Գինը (ՀՀ դրամ)
1	Դիզելային վառելիք, ամառային	460000 (չորս հարյուր վաթսուն հազար)

Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

1/ «Ֆլեշ» ՍՊԸ – ք. Երևան, Ե. Կողբացու 30, հեռ. 010 53 42 33, էլ. փոստ flash@flashltd.am:

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

«Ֆլեշ» ՍՊԸ՝

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:

3. Մասնակցի առաջարկած գինը

1/ «Ֆլեշ» ՍՊԸ՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գինն ԱԱՀ-ով (դրամ)	Գինն առանց ԱԱՀ (դրամ)
1	Դիզելային վառելիք (ամառային)	460000 (չորս հարյուր վաթսուն հազար)	383333.33 (երեք հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք)

4. Մասնակցի կողմից համապատասխան տեղեր զբաղեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

5. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել «Ֆլեշ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում lilit@ktak.am էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին ներկայացնել «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/04» ծածկագրով հրավերի (այսուհետ՝ հրավեր) 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝

իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված N 6.1-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

6. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Ֆլեշ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ համաձայն հրավերի հավելված 8-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/04» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2018թ. մայիսի 30-ին ժամը 16:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Մարքարյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան